Մամլո հաղորդագրություն

Ծաղկաձոր, 31-ը մայիսի, 2011թ.

Միջազգային համաժողով՝ նվիրված Հայաստանում թունավոր աղտոտիչներով և թունաքիմիկատներով աղտոտվածության հիմնախնդիրների քննարկմանը

2011թ.-ի մայիսի 31-ին Արնիկա ասոցիացիայի <<Թույներ և թափոններ>> ծրագիրը և <<Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի>> /ՀԿՀԱԱՇՄ/ հասարակական կազմակերպությունը, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համագործակցությամբ կազմակերպեցին Ստոկհոլմի կոնվենցիայի 10-րդ տարեդարձին նվիրված միջազգային համաժողով, որն առիթ էր նաև ներկայացնելու Եվրամիության ֆինանսավորմամբ համատեղ իրականացված <<Հայաստանի գյուղական համայնքներում աղքատության կրճատմանը նպաստելու նպատակով բնակչության քիմիական անվտանգության բարելավման ոլորտում ձեռք բերված փորձի տարածում>> ծրագրի արդյունքները:

2003թ.-ի հոկտեմբերին Հայաստանը վավերացրեց Ստոկհոլմյան կոնվենցիան՝ հատուկ վտանգավոր քիմիական նյութերից մարդկանց առողջության և շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված միջազգային համաձայնագիրը: Նպատակ ունենալով օժանդակել Հայաստանին՝ կոնվենցիայի իրականացման գործում, ծրագրի ուշադրությունը սևեռված է եղել հիմնականում գյուղական համայնքներում կայուն գյուղատնտեսության զարգացման աջակցությանը և մի շարք թեժ կետերում ժամկետանց թունաքիմիկատներով աղտոտվածության վերացման տեխնիկական լուծումների առաջարկմանը:

Յինդրիխ Փեթրլիկը, Արնիկա ասոցիացիայից, ներկայացրեց ԿՕԱ-ներով աղտոտված հետևյալ 5 թեժ կետերից՝ժամկետանց և արգելված թունաքիմիկատների գերեզմանոց (Նուբարաշեն), թունաքիմիկատների նախկին 3 պահեստ (Զրառատ, Էջմիածին և Մասիս) և պղնձի արտադրության թափոնների գերեզմանոց (Ալավերդի), վերցրած օդի, հողի և այլ կարծր նյութերի 57 նմուշի հետազոտությունների արդյունքները: Կատարվել է նաև նշված վայրերի վիճակի, հնարավոր ռիսկերի և սննդային շղթայի աղտոտվածության մոնիթորինգ: <<Անալիզները ցույց են տվել, որ ժամկետանց թունաքիմիկատների նախկին պահեստներում կան ԴԴՏ-ի պաշարներ: Դրանք հատկապես մեծ քանակներով հայտնաբերվել են Զրառատում: ԴԴՏ և այլ թունաքիմիկատներ հայտնաբերվել են նաև սննդի նմուշներում>>, - ասում է Յինդրիխ Փեթրլիկը:

Խոսելով թեժ կետերի վնասազերծման խնդրի հնարավոր լուծումների մասին, Յինդրիխ Փեթրլիկը նշեց, որ <<Անհրաժեշտ է ոչ միայն վնասազերծել աղտոտված տարածքները, այլև չստեղծել նոր հնարավոր վտանգներ մարդկանց առողջության և շրջակա միջավայրի համար>> և ընդգծեց, որ պետք է օգտագործել այրում չենթադրող տեխնոլոգիաներ: Վտանգների նվազեցման համար գոյություն ունեն նաև մի շարք կարճաժամկետ միջոցառումներ, օրինակ, աղտոտված տարածքների ցանկապատում, ներկայումս օգտագործվող պարարտանյութերի և թունաքիմիկատների պահեստավորման նպատակով նախկինում աղտոտված շինությունների օգտագործումից հրաժարում և այլն:

ՀԿՀԱԱՇՄ -ն և Արնիկան հավատացած են, որ հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն պետական մարմինների, փորձագետների և ՀԿ-ների փոխգործակցությամբ: ՀԿՀԱԱՇՄ-ն ստեղծել է Հայաստանի հասարակական կազմակերպությունների համագործակցության ցանց և քիմիական անվտանգության մասին տեղեկատվական կենտրոն: <<Քիմիական աղտոտումը կարող է վատացնել ջրի և հողի որակը: Իրազեկության բարձրացման քարոզարշավների միջոցով մենք օգնել ենք մարդկանց՝ պայքարելու իրենց իրավունքների համար>>,- նշում է կազմակերպության նախագահ Ելենա Մանվելյանը:

Եվրամիությունը ծրագրի գլխավոր հովանավորն է: Ծրագրին տարբեր փուլերում ֆինանսապես աջակցել են՝ Գլոբալ Բնապահպանական Հիմնադրամը /GEF/ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի միջոցով, <<Շրջակա միջավայրի պաշտպանության դրամաշնորհների համաշխարհային Ֆոնդը>> /GGF/, ԿՕԱ-ների ոչնչացման միջազգային ցանցը /IPEN/, <<Եվրոպայի կանայք՝ հանուն ընդհանուր ապագայի>> /WECF/ կազմակերպությունը և Չեխիայի Զարգացման գործակալությունը: Համաժողովի կազմակերպմանը մասնակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել ԵԱՀԿ երևանյան գրասենյակը:

Ծրագիրն իրականացրել են ՀԿՀԱԱՇՄ ՀԿ-ն և Արնիկա ասոցիացիան

Սույն ծրագիրը ֆինանսավորել է Եվրամիությունը

ՀԿՀԱԱՇՄ ՀԿ
Հասցե՝ Երևան, Բաղրամյան պող. 24դ, սենյակ 609
Հեռ.՝ +37410523604

Արնիկա
Հասցե՝ Խլումովա 17, 130 00
Պրահա 3
Tel: +222 781 471

Եվրամիության պատվիրակություն Հայաստանում
Հեռ.՝ +374 10 546494
Ֆաքս՝ + 37410 54 64 95

Եվրահանձնաժողովը Եվրամիության գործադիր մարմինն է:

<<Եվրամիությունը բաղկացած է 27 անդամ պետությունից, որոնք որոշում են կայացրել աստիճանաբար միավորել իրենց գիտելիքները, ռեսուրսները և ճակատագրերը: Համատեղ ուժերով 50 տարիների ընթացքում նրանք ստեղծել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի՝ միաժամանակ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրամիությունը պարտավորություն է ստանձնել իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ կիսել իր նվաճումներն ու արժեքները>>: